



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

«Աղբուիր բաժեսլ գիտութեան ԱԱՏՈՒՇՈՅ»:

ոնիս ամսվա վերջերին Մայր Աթոռ. Ս. Էջմիածնի Ծեմարանը փակեց իր 22-րդ ուսումնական տարեշրջանը, կրթական, հոգեւոր ու բարոյական բարի արդյունքներով։

Ավանդական հանդիսությամբ տեղի ունեցան ամսվերջի քննություններն ու հանդիսությունները։

Վեհափառ Հայրապետի անմիջական նեկավարության ներքո կրթական-դաստիարակչական գործը Մայր Աթոռի գործունեության մեջ պատասխանառու ու հիմնական աշխատանքներից մեկն է հանդիսանում, որի հաջողության համար Ն. Ս. Օծությունը ոչ միայն հասուկ ուշադրություն է ընծայում, այլ կանգ չի առնում բարոյական ու հյութական ոչ մի զոտողության առաջ։

Հոգևոր Ծեմարանը, որը բացվել է 1945 թվի նոյեմբերին բասինգի Տ. Տ. Գեորգ. Զ. Հայրապետի օրոք, ազգին Վեհափառ Հայրապետի սրտին մոտիկ հաստատություն է, որի գոյության և նպատակների հետ նա կապել է վարդագոյն հոյսեր։ Հոգևոր Ծեմարանը կոչված է պատասխանառու դեր կատարելու Հայկ. Առաքելական եկեղեցու կյանքում, իր կոչման ու պարտականության գիտակից, քաջնակողմանի զարգացման, հավատակության ու հայրենանվեր նոր հոգևորականության պատրաստելու առաջարկում։

Ս. Էջմիածնի Հոգևոր Ծեմարանը գոյություն է ունեցել Լուսավորիչի օրերից։ Հիմնական աղարշապատը, Ս. Էջմիածնիը շատ հնուց

եղել է հայ ժողովրդի եկեղեցական ու մշակութային կենտրոն, որը բացվել են Երդ դարում առաջին հայագիր դպրոցները աշակերտական հոճ խմբերով, որոնք եկել են Վաղարշապատ «ի կողմանց և ի գաւառաց Հայատան աշխարհի, յորդեալը և դրդեալը հասանելին ի բացեալ աղբիրն գիտութեան Սատոնյ, քանզի յԱլրարատեան գաւառին ըլիսեցին հայոց շնորհը պատուիրանացն Սատոնյ» (Կորյուն)։

Ազգին Վեհափառ Հայրապետի սրտի ամենախոր իշճն է մեր օրերում և հայ եկեղեցու կյանքում Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ծեմարանը դարձել «աղբիր բացեալ գիտութեան Սատոնյ»։

Ուրախ ենք արձանագրելու, որ օգնականությամբ Սատոնյ, նեկավարությամբ Նորին Ս. Օծության, աշխատանքով ու նվիրումով դասախոսական կազմի, Հոգևոր Ծեմարանը այս տարի է շարունակեց իր գործը, ինչպես անցաւ տարիներում, գոհացուցիչ ու գնահատության արժանի արդյունքներով։

Ս. Էջմիածնի կրթական լուսարույր մժանորտում, երա ոգեկան լուսի մեջ աճում, պայծառակերպում են մեր ուսանողները, հասունանում է նրանց մտավոր ու հոգեկան կամքը բազմերեւ և բավարար պատրաստությամբ, կոչումի, ծառայության ճանապարհին վրա։

Դասախոսական կազմը կատարում է իր լավագույնը խղճի մտոր, ուսանողության մեջ արմատավորելու մեր նախնական

իսն բարի ոգին ու բարեպաշտությունը, ճշշմարիտ հայրենակիրություն, հաղորդակից դարձնելով նրանց նաև մեր մշակութային նոգեսոր արժեքներին: Դասախոսները ոչ միայն զիտելիքներ են ջամբռում, այլ «զնոգի առարելաբար աշակերտելոց» տան:

Հոգեսոր Ծեմարանում ուսումնական պրանոմ լրաց տեղ է հատկացված կրոնական-եկեղեցական, ապահածարանական ու հայագիտական առարկաներին: Մասնագիտական առարկաներին զոգենիքաց մեծ ուշադրություն է դարձվել նաև հանրակրթական առարկաների վրա, հատկապես լեզուների, գրաբարի, աշխարհաբարի, ոռուերենի և անգլերենի:

Անմեն տարի Վեհափառ Հայրապետի հայագիտության ներք գումարված մասնավարժական ծողություն վերանայվում է ուսումնական պլանը, որպեսզի Ծեմարանը իր անփան արժանի, ուսումնական բարձրության վրա մնա:

Ն. Ս. Օծուրյունը, որը գլխավորում է դասախության կազմը, միշտ նոր խնդիրներ է դեռմ, դաստիարակության ու կրթության տեսակետից, Հոգեսոր Ծեմարանի առաջ, որոնց կատարումը պահանջում է սխուտենատիկ աշխատանք, եռանդ և ևվիրուս:

«Մայր Աթոռ Ս. Էջմիածնը, —ասում է Վեհափառ Հայրապետը, —գլուխ է մեր սուրբ եկեղեցին, և որն իր զինվորյալ միաբանությամբ և Հոգեսոր Ծեմարանով պետք է դառնա կենսատու փառու, օրինակ, առաջնորդ և ներշնչարակ համայն հայ հոգևորականության և հայ ծողությին»:

Վեհափառ Հայրապետը Ծեմարանում իր դասախությունների ընթացքում, այնուհետև ուսանողության հետ վեհարանում իր գրուցների և հանդիպումների ժամանակ, շեշտը դնում է ուսանողության բարոյական նկարագրի կազմության, հոգեսոր, հայրենասիրական դաստիարակության կարևորության և հայության և հայ ծողությից:

«Մեր եկեղեցական կյանքի վերջին տարիներու տագենապը, շեշտում է վշտով Վեհափառ Հայրապետը, ամեն բանե առաջ տագնապն է մեր հոգևորականության հոգեգփոր-բարոյական կյանքի և հետևանքը առարելության գիտակցության մը պակասին»:

Այս մոտածությունից լուսին տակ Ն. Ս. Օծուրյունը աշխատում է, որ Հոգեսոր Ծեմարանում իր հայրական նախաձրի և շնչի ներք հասակ առնի, աճի, կազմակորությի, իմացապես և հոգեպես մի նոր Միաբանություն, Ծեմարանի գրաւելաններից սկսած «ըստ իրում պատկերի և հմանութեան», որպեսզի նրանք վաղը, որպես հարազատ որ-

դիներ, «որ զնմանութիւն հօրն բերեն», շարունակեն նր մեծ գործը:

Հոգեսոր Ծեմարանի նկատմամբ Հայոց Հայրապետի ցուցաբերած այս ջերմ հոգատապությունն ու պահանջլուստրությունը պարտավորեցնում է ուսանողությանը, համար և քրտևազան աշխատանքով, չանասիրությամբ և օրինակելի վարքով, պրարացնելու Հայրապետական բարձր վատահությունը:

Հոգեսոր Ծեմարանի վեցամյա ուսումնառության շրջանը, շրջանը է անխոնչ, ոչադիք աշխատասիրության, աղոթքի և խոկմության, մտքի զարգացման, բարոյական նկարագրի կերտման, հոգեկան կարողությունների փրթությն, դառնապատ համար «հայրապետն Այգու» մշակներ «բրասսո երագներ», «համեմիշ աղ» վաղվա ծառայության բաղցը նոյստվի:

Անցնող տասերմեկ տարիների ընթացքում Հոգեսոր Ծեմարանը տվել է 40 շրջանավարտներ, որոնցից 30-ը ընդգրկել են հոգեսոր ասպարեզ, որպես կուսակրոն և ամուսնացալ բահանաներ և սարկավագներ:

1966—67 ու. տարին սկսվեց 34 աշակերտներով: Այս տարի Ծեմարանը ուներ երեք դաստիարական և երկու լարահական բաժիններ:

Ամսագրի սոյն համարում տպագրվել է Հոգեսոր Ծեմարանի Տեսչի 1966—67 ու. տարիա գործունեության ընթանուր պատկերը ներկայացնող շահեկան և բովանդակայից գեկուցագրից:

Այստեղ մասնավոր կարևորությամբ ուղարկ ենք նշել, որ մայիսին 2-րդ լսարանի չորս ուսանողներ, Վեհափառ Հայրապետին տված իրենց գրավոր խնդրագրի հիման վրա, տեսչության միջնորդությամբ ստացան սարկավագության ձեռնադրության շնորհը և մտան Մայր Աթոռի Միաբանության շարքերը:

Չորս սարկավագները, ազատակամ, համոզումով և գիտակից որոշակում են կան իրենց երիտասարդական թարմ կորուլով ավելացնելու Մայր Աթոռում հայ եկեղեցու սպասակիրության կանչված իրենց երեց միաբան եղբարձրների թիվը:

Այս հանգամանքը ուրախալի է և հուսադրիչ միանգամայն: Հոգեսոր Ծեմարանը քայլ առ քայլ ու հետևողականորեն աշխատում է իրագործել այն նպատակը, որի համար նա կյանքի է կոչված:

Ինչպես երևում է տեսչական տեղեկագրից, անցնող ուսումնական տարում ձեռք է բերվել Հոգեսոր Ծեմարանում որոշակի առաջընթաց ուսման որակի բարձրացման, ուսանողության գիտակցական կարգապահության ամրապնդման, կրոնական և հոգեսոր

դաստիարակության խօրացման, և բարոյական նկարագրի կերտման աշխատանքներում:

Ենթադրում դասավանդություն ու դասարակություն, Մայր տաճարում աղոռը ու երգ, վաճական խաղաղ մթնոլորտում համայնական—եղբայրական կյանք, այդ բոլորը որպես դաստիարակության մի ընդհանուր սիստեմ գոգորդվում է միմյանց նետ, օրինակելի և ամբողջական դարձնելու համար դաստիարակության գործը Մայր Սրբություն, կրոնաբույր ու նայելնաշտեն այս մթնոլորտի սրբազն կանարների տակ:

Այս բոլորը, սրտերը լցնում են որպատրյամբ ու բավատեսությամբ Մայր Սրբություն, Կըմիածնի պայծառ սպազմայի մասին:

Հոգեոր Ծեմարանի այս տարվա ողջունելի արդյունքների մեջ, Վեհափառ Հայրապետի կենդանի օրինակից և ամենօրյա դեկավարությունից նետո, իր արդար բաժինն ունի նաև Ծեմարանի երիտասարդ տեսուչ Հոգ. S.. Ներսէ Ռ. վրդ. Պողապալյանը, որը հոգեին սիրում է իր գործը և այն կատարում է նվիրում, անձնազոհությամբ, եղբայրական մերու և սեռն համագործակցությամբ: Դաստիարական կազմակերպության կազմին:

Հոգեոր Ծեմարանը թևակրխում է իր գոյրան 23-րդ տարին: Ծեմարանը արդեն ավանդություն դարձած մեայուն սկզբունքներունի և ուղղություն ու իր կրոնական—կրթա-

կան, հոգեոր, հայրենասիրական աշխատանքը կատարում է վատահությամբ:

Այս մտածումների և զգացումների լուսի տակ, «Էջմիածն» ամսագրի հովիս-օգոստոս միացյալ համարը նվիրվել է Հոգեոր Ծեմարանին: Ամսագրի սովոր համարը լուս է տեսնում միայն դասավանդական կազմի ողջունելի աշխատակցությամբ և մի խումբ ուսանողների սրտագին մասնակցությամբ:

Հայ ծովովորդը թերկրանքի զգացումով է նայել միշտ, մասնավառ վերջին տասը տարիների ընթացքում, ազգին Վեհափառ Հայրապետի եկեղեցական, հոգեոր, մշակութային, վերանորոգչական, հայրենասիրական գործունեարշանը վրա, գործունեարքունիք որի հիմնական օղակներից մեկն է նաև ուսումնա-դաստիարակչական, կրթական աշխատանքը Հոգեոր Ծեմարանի հարկի տակ: Կանցնեն օրեքն ու տարիները, ու մեր տասնույները կրտստիարակին հավատքի և նայելնասիրության այս սրբազն մթնոլորտի մեջ, շարունակելու համար Հայ Եկեղեցու առաքելության մեջ գործը, մեր ծովովորդի հոգեոր կյանքում:

Ուշույն Ծեմարանին ու նորանոր նախունակություններ, հետագա ուսումնական տարիների ընթացքում, ի միմիթարություն Հայոց Հայրապետի սրտին, հոգեախտթյուն հայ հավատացյալ ծովովորդին և ի պայծառություն Մայր Սրբություն Ս. Էջմիածնի:

